<<ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 1 ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

<<19>> հուլիս 2017թ **N Ե1-017-332**

ԱՇՈՏ ԱԶԱՏԻ ԱԶԻԶՅԱՆ Ա/Ձ-ԻՆ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, 16 ԹԱՂԱՄԱՍ,
25 ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 111

Հարգելի պարոն Ազիզյան

Համաձայն Ձեր և <<Երևանի N 1 տուն-ինտերնատ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N-ԵՏԻՊ-ՇՀԱՊՁԲ-15/1-Թ17-Ա/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) հավելված 2-ի Ձեր կողմից Կազմակերպությանը մինչև սույն թվականի հունիսի 30-ը պետք է մատակարարվեր 30 հատ շրջազգեստ-խալաթ և 400 հատ սավան (այսուհետ՝ Ապրանք):

Կազմակերպության կողմից Ձեզ էլեկտրոնային եղանակով տեղեկացվել էր, որ մինչև սույն թվականի հուլիսի 03-ը համապատասխան Ապրանքը չմատակարարելու դեպքում Կազմակերպությունը, սահմանված կարգով, դիմելու է ՀՀ ֆինանսների նախարարություն Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում ներառելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը և 3.1.7.1 կետի ա) և բ) կետերը՝ Կազմակերպությունը 2017 թվականի հուլիսի 19-ից միակողմանի լուծել է 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N-ԵՏԻՊ-ՇՀԱՊՁԲ-15/1-Թ17-Ա/1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին մատակարարման ժամկետների խախտման համար (N-ԵՏԻՊ-ՇՀԱՊՁԲ-15/1-Թ17-Ա/1 գնման պայմանագրի 7.5 կետ) փոխանցել 5616 (հինգ հազար վեց հարյուր տասնվեց) ՀՀ դրամ:

Վ. ՁՈՒՐԱԲՅԱՆ

Կատ.՝ իրավախորհրդատու՝ Ա. Խաչատրյան
ք. Երևան, Հաղթանակի 2-րդ փողոց, 45 տուն
հեռ.՝ 010723910